Քաղաքացիական կրթության թեստ

Հրահանգ

Ձեր առջև քննական թեստի էլեկտրոնային բուկլետն է:

Ուշադիր ծանոթացեք առաջադրանքների հրահանգներին, ճիշտ ըմբռնեք յուրաքանչյուր առաջադրանքի պահանջը, այնուհետև պատասխանեք հարցերին:

Թեստի առավելագույն միավորն է՝ 60

Թեստի վրա աշխատելու համար տրվում է 5 ժամ

Մաղթում ենք հաջողություն:

Հրահանգ

- **Առաջադրանք՝ ընտրովի պատասխաններով (№1-13, 25.1-25.3)**

Յուրաքանչյուր հարցին տրված է չորս ենթադրական պատասխան: Դրանցից միայն մեկն է ճիշտ: Պատասխանների թերթիկի վրա, ճիշտ պատասխանի համապատասխան վանդակում, դրեք **X** նշանը: Ոչ մի այլ նշում չի ընկալվի էլեկտրոնային ծրագրի կողմից: Եթե ցանկանում եք ուղղել նշված պատասխանը, ապա ամբողջությամբ ներկեք այն վանդակը, ուր դրել եք **X** նշանը և այնուհետև նշեք պատասխանի նոր տարբերակը: Ուղղած պատասխանը կրկին անգամ հնարավոր չէ ընտրել: Յուրաքանչյուր առաջադրանք գնահատվում է 1 միավոր:

1. **Ո՞ր իրավունքն է համարվում պետության առնչությամբ պոզիտիվ իրավունք:**

ա. Կրթության

բ. Կյանքի

գ. Դավանության

դ. Սեփական կարծիքի արտահայտման

2. Իրավունքի ո՞ր հիմնական ճյուղն է կանոնավորում, մի կողմից պետական մարմինների և մյուս կողմից հասարակական կարգի խախտումների մեծ մասը:

ա. Քրեական իրավունքը

բ. Վարչական իրավունքը

գ. Մունիցիպալ իրավունքը

դ. Քաղաքացիական իրավունքը

3. Ինչպե՞ս է կոչվում այն իրավիճակը, երբ շուկայում մի քանի խոշոր ակտոր է ներկայացված, ինչից ելնելով էլ փոքր ձեռնարկատերերը դժվարանում են հաստատվել շուկայում:

ա. Մենաշնորհ

բ. Օլիգոպոլիա

գ. Մենաշնորհային մրցակցություն

դ. Ազատ մրցակցություն

4. Վրաստանի ընդհանուր դատարանների ո՞ր օղակն է քննարկում վճռաբեկ բողոքները:

ա. Շրջանային

բ. Քաղաքային

գ. Վերաքննիչ

դ. Գերագույն

5. Ո՞ր պատմական իրադարձությունն է համարվում երկբևեռականության օրինակ միջազգային հարաբերություններում:

ա. Սառը պատերազմ

բ. Երկրորդ Համաշխարհային պատերազմ

գ. Խորհրդային միության փլուզումը անկախ պետությունների

դ. Միավորված ազգերի կազմակերպության հիմնադրումը

6. Մերկանտիլիզմի մասին ո՞ր դատողությունն է ճիշտ:

ա. Տնտեսական ազգայնականության ձև, որի նպատակն է որքան հնարավոր է շատ ապրանք արտահանել միջազգային շուկա

բ. Տնտեսական ազատականության ձև, որը առանձնահատուկ ուշադրության է արժանացնում անհատ ձեռնարկատերերի դերը և նրանց ազատ առևտուրը

գ. Տնտեսական ազատականության ձև, որը գլխավոր շեշտը դնում է ներմուծման նշանակության վրա միջազգային շուկայական տնտեսության մեջ:

դ. Տնտեսական ազգայնականության ձև, որի գլխավոր նպատակն է ազատել տնտեսական գործունեությունը սահմանափակումներից ու կանոնավորումներից

7. Ռազմավարական պլանավորման գործընթացի ո՞ր փուլն է արտացոլում տրված սխեման:



ա. Իրավիճակի վերլուծություն

բ. Գործողությունների պլանի ստեղծում

գ. Նպատակների հիերարխիայի ձևավորում

դ. Առաջընթացի գնահատման պլանի մշակում

8. Վրաստանի օրենսդրության համաձայն, ո՞վ կարող է համարվել փախստականի կարգավիճակ ունեցող անձ:

ա. Վրաստանի քաղաքացին, որը ստիպված է տեղաշարժվել Վրաստանի տարածքի սահմաններում, քանի որ նրա կյանքը վտանգված է օտար երկրի ագրեսիայից ելնելով:

բ. Վրաստանում մշտապես բնակվող անձը, որը կամավոր լքել է իր բնակելի տունը, քանի որ երկրի ներքին կոնֆլիկտից ելնելով վտանգվել է նրա առողջությունը, սակայն չի հատել պետության սահմանը:

գ. Անձը, որը մուտք է գործել Վրաստանի տարածք, թեև Վրաստանը չի հանդիսանում նրա ծագման երկիրը և զուրկ է Վրաստանի քաղաքացիությունից, սակայն հետապնդման պատճառով ստիպված է եղել լքել իր մշտական բնակության երկիրը:

դ. Անձը, որը կամավոր լքում է իր քաղաքացիության կամ մշտական բնակության երկիրը և բնակության է տեղափոխվում Վրաստան:

9. Ո՞ր քաղաքում է գտնվում միջազգային քրեական դատարանը։

ա. Ժնևում

բ. Հաագայում

գ. Նյուրնբերգում

դ. Վարշավայում

10. Ո՞ր դատողությունը *չի համապատասխանում* Վրաստանի սահմանադրությանը կապված Վրաստանի քաղաքացիության հետ:

ա. Վրաստանից արգելվում է վտարել Վրաստանի քաղաքացիներին

բ. Քաղաքացիությունը շնորհվում է ծնված օրվանից կամ հպատակագրման (նատուրալիզացիա) միջոցով

գ. Վրաստանը պաշտպանում է իր քաղաքացուն միայն իր տարածքի սահմաններում

դ. Քաղաքացիություն ձեռք բերելու և քաղաքացիությունից զրկվելու կարգը սահմանվում է օրգանական օրենքով

11. Վրաստանի սահմանադրության համաձայն, ո՞ր սկզբունքի վրա է հիմնվում պետական իշխանության և ինքնակառավարման միավորների իրավասությունների բաժանումը:

ա. Սուբսիդիարության

բ. Սուբորդինացիայի

գ. Մեդիացիայի

դ. Կոնսոլիդացիայի

12. Աղյուսակն արտացոլում է ազգային վիճակագրական ծառայության տվյալները 2017 թվականի սեպտեմբերին Վրաստանում տարեկան գնաճի մակարդակի վերաբերյալ.

Սպառողական զամբյուղի մեջ մտնող ապրանքների և ծառայության խմբեր	Գների փոփոխություն նախորդ տարվա համապատասխան ամսվա համեմատությամբ(%)	Խմբի ավանդը գնաճի նախորդ տարվա համապատասխան ամսվա համեմատությամբ (%)
Սննդամթերք և ոչ ալկոհոլային խմիչք	6.5	1.96
Ալկոհոլային խմիչքներ, ծխախոտ	17.4	1.13
Հագուստ և կոշկեղեն	-4.6	-0.17
Բնակատեղ, ջուր, էլ.էներգիա, գազ	2.4	0.2
Կահույք, կենցաղային իրեր, տան խնամք	2.1	0.14
Առողջապահություն	7.7	0.69
Տրանսպորտ	14.7	1.84
Կապի ծառայություն	-1.4	-0.06
Հանգիստ, ժամանց և մշակույթ	0,0	0
Կրթություն	1.8	0.09
Հյուրանոցներ, սրճարաններ և ռեստորաններ	3.8	0.16
Տարբեր ապրանքներ և ծառայություններ	3.9	0.19
Տարեկան գնաճի մակարդակը, ընդամենը՝	6.2	

Աղյուսակի տվյալների համաձայն, 2017 թվականի սեպտեմբերին, նախորդ տարվա համապատասխան ամսվա համեմատությամբ.

ա. Գների աճման ամենաբարձր տոկոսային փոփոխությունը արձանագրվել է ալկոհոլային խմիչքների և ծխախոտի ապրանքի առնչությամբ, թեպետ այս խմբի ավանդը տարեկան գնաճում պակաս է սննդամթերքի և ոչ ալկոհոլային խմիչքների խմբի համեմատությամբ:

բ. Հյուրանոցների, սրճարանների և ռեստորանների խմբի ավանդը տարեկան գնաճում ավելի բարձր է, քան հանգստյան, զվարճանքի և մշակույթի, թերևս պակաս է հաղորդակցության ավանդից:

գ. Կրթության ավանդը տարեկան գնաճում ավելի պակաս է, քան տրանսպորտի ավանդը, թերևս այս վերջին խմբին գնաճի փոփոխությունը առավել նվազ վերաբերեց , քան կահույքին, ընտանեկան իրերին և տան խնամքին:

դ. Հագուստի և կոշկեղենի արտադրանքին գնի փոփոխությունը ավելի շատ վերաբերեց, քան առողջապահությանը:

13. Առաջադրանքում տրված է 2016 թվականին Ֆրիդրիխ Էբերտի հիմնադրամի կողմից անցկացված երիտասարդության հետազոտության տվյալները տարածաշրջանային կտրվածքում.

Երիտասարդության շրջանում երկիրը լքելու ցանկացողների 38%-ը, որպես գլխավոր դրդապատճառ կենսապայմանների բարելավումն է նշում, իսկ 17%-ը՝ առավել որակյալ կրթությունը: Տվյալները տարածաշրջանային կտրվածքում տարբեր են՝

- Թբիլիսի. Կենսապայմանների բարելավում՝ 28%, առավել որակյալ կրթություն՝ 21%
- Այլ քաղաքներ. Կենսապայմանների բարելավում՝41%, առավել որակյալ կրթություն՝ 14%
- Գյուղեր. Կենսապայմանների բարելավում՝ 52%, առավել որակյալ կրթություն՝ 12%

Տվյալների հիման վրա արված ո՞ր եզրահանգումն է ճիշտ:

ա. Գյուղերում կրթության մակարդակն ավելի բարձր է, քան Թբիլիսիում և այլ քաղաքներում:

բ. Առավել լավ կենսապայմանների պատճառով երկիրը լքելու ցանկացողների ամենաբարձր բաժինը գյուղերում բնակվող երիտասարդների շրջանում է:

գ. Առավել լավ կենսապայմանների պատճառով երկիրը լքելու ցանկացողների բաժինը Թբիլիսիում բնակվող երիտասարդների շրջանում ավելի բարձր է, քան այլ քաղաքներում:

դ. Առավել որակյալ կրթություն ստանալու պատճառով երկիրը լքելու ցանկացողների բաժինը Թբիլիսիում ավելի բարձր է, քան կենսապայմանների բարելավման նպատակով երկիրը լքելու ցանկություն ունեցող երիտասարդներինը:

Հրահանգ

Հաջորդականության սահմանում (№14)

Առաջադրանքում տրված թվարկացանկը դասավորեք նշված սկզբունքի համաձայն: Պատասխանները գրառեք պատասխանների թերթիկի վրա տրված վանդակներում: Ի նկատի ունեցեք, որ վանդակում գրվում է միայն ընտրված պատասխանի համապատասխան թվանշանը: Միավորների առավելագույն քանակը նշված է առաջադրանքի երկայնքով:

14. (1) Սխեմայի վրա խախտված է Մասլոուի պահանջմունքների բուրգի աստիճանների հաջորդականությունը: Դասավորեք աստիճանները աճման համաձայն:



1*				

*աղյուսակում նշված է ճիշտ պատասխանը

Հրահանգ

Համապատասխանության որոշում (№15-17)

Առաջադրանքում երկու սյունակով տրված է տարբեր տեսակի թվարկացանկ: Որոշեք համապատասխանությունը այս երկու սյունակներում ներկայացված տեղեկատվության միջև: Պատասխանները գրառեք պատասխանների թերթիկի վրա տրված աղյուսակում: Միավորների առավելագույն քանակը նշված է առաջադրանքի երկայնքով:

15. (1) **Համապատասխանեցրեք II սյունակում տրված քաղաքական ազգայնականության ձևերը I սյունակում տրված դրանց բնորոշ հատկանիշներին.**

I. Բնորոշ հատկանիշները	II. Քաղաքական ազգայնականության ձևերը
ա. Ցանկացած ազգի անկախության ճանաչում, հավատ ազգային ինքնորոշման և ազգային պետության ձևավորման համընդհանուր իրավունքի նկատմամբ: բ. Անհավասարություն ազգերի միջև, ազգի ինքնորոշման սկզբունքի ժխտում և իմպերիալիստական նկրտումներ, ազգայնամոլ բնույթ: գ. Ազգային-ազատագրական պայքար քաղաքական և տնտեսական անկախության համար, ձգտում դեպի սոցիալական զարգացում: դ. Ազգ-պետության ժխտում, կոչ դեպի բարեկամ ազգերի միավորում և պայքար այդ ազգերը, որպես մեկ քաղաքական ուժ ձևավորելու համար:	1. Հակազաղութային ազգայնականություն 2. Ազգայնականության գերակայություն (Պան-նացիոնալիզմ) 3. Լիբերալ ազգայնականություն 4. Էքսպանսիվ ազգայնականություն

16. **(2) Համապատասխանեցրեք I սյունակում տրված բնութագրիչները II սյունակում տրված միջազգային քաղաքականության հիմնական տեսական դպրոցների հետ.**

I. Բնութագրիչներ	II. Միջազգային քաղաքականության տեսական դպրոցներ
ա. Միջազգային քաղաքականությունը պետք է քննարկվի բարոյական արժեքների կտրվածքում: բ. Միջազգային կոնֆլիկտները կամ համագործակցությունը հիմնվում են ուժերի հավասարակշռության հայեցակարգի վրա, շեշտը նույնպես պետք է դրվի հենց ուժային քաղաքականության վրա: գ. Միջազգային քաղաքականության մեջ կարևոր է շեշտը դնել միջազգային կապիտալի նշանակության և տնտեսության ուժի վրա: դ. Գլոբալ քաղաքականության մեջ առաջատար դերը շնորհվում է երկրի բաց լինելու սկզբունքին, երկրի ինքնավարությունը ճանաչելու հետ միասին: ե. Գլոբալ քաղաքականությունը պետք է կառավարի միջազգային դասի վրա հիմնված իշխանության հորիզոնական կառուցվածք ունեցող մոդելը:	1. Պլյուրալիզմ 2. Մարքսիզմ 3.Իդեալիզմ 4.Ռեալիզմ

17. (1) Քարտեզն արտացոլում է աշխարհում չափահասների կողմից ալկոհոլի սպառման տվյալները: Աղյուսակի I սյունակում տրված երկրներին համապատասխանեցրեք II սյունակում տրված ալկոհոլի սպառման մակարդակը.



I. Երկիր	II. Ալկոհոլի սպառման մակարդակը
ա. Ռուսաստան	1. Շատ բարձր
բ. Սաուդյան Արաբիա	2. Բարձր
գ. Թուրքիա	3.Միջին
դ. Կանադա	4. Ցածր
ե. Ֆրանսիա	5. Շատ ցածր

Հրահանգ

Սխալի ուղղում (№18)

Առաջադրանքում տրված է տեքստ, որտեղ թույլ են տրված փաստացի սխալներ (տարեթիվ, տերմին, անուն և այլն): Բացահայտեք և ուղղեք դրանք: Բացահայտած սխալը և դրա ուղղած տարբերակը գրառեք պատասխանների թերթիկի վրա տրված աղյուսակում (սխալը՝ I սյունակում, իսկ ուղղած տարբերակը՝ II սյունակում): Ի նկատի ունեցեք, յուրաքանչյուր բացահայտված սխալ, իր ուղղված տարբերակի հետ միասին, գնահատվում է 1 միավոր: Միավորների առավելագույն քանակը նշված է առաջադրանքի երկայնքով:

18. **(7) Ուշադիր ընթերցեք տեքստը, գտեք և ուղղեք սխալները.**

Խոսքի ազատություն

Խոսքի ազատությունը կարևոր է հասարակության զարգացման համար, ինչպես քաղաքական, այնպես էլ անձնական տեսանկյունից ելնելով: Օրինակ՝ այն պետություններում, որտեղ պահպանված է խոսքի ազատությունը առկա է քաղաքական էլիտիզմը, ինչն ենթադրում է տարբերվող քաղաքական գաղափարների համագոյակցում ու մրցակցություն: Բացի այդ, խոսքի ազատության պայմաններում մարդկանց անհատական մակարդակով հնարավորություն է ընձեռնվում առավել լավ սահմանել անձնական կյանքը, գաղափարներ փոխանակել համաքաղաքացիների հետ և ձեռքբերել բազմատեսակ գիտելիքներ աշխարհի ու սեփական անձի մասին:

Այն, որ այսօր այլ իրավունքների հետ միասին այդքան բազմակողմանիորեն է պահպանված խոսքի ազատությունը, շատ մեծ պատմական գործընթացի արդյունք է: Այդ առումով, առաջին քայլերից մեկն արվել է 1628 թվականին Գերմանիայում, որտեղ ընդունվել է «Իրավունքների մասին խնդրագիրը», որի համաձայն, այլնի հետ միասին արգելվել է նաև քաղաքացիների նամակների և անձնական թղթերի խուզարկումը:

Խոսքի ազատությունը պահպանելու մեծ ավանդույթ ունի նաև Ամերիկայի Միացյալ Նահանգները: 1791 թվականին ԱՄՆ-ի սահմանադրության մեջ մտցրեցին ուղղումներ, որոնք հայտնի են

Անցնել տեքստի երկրորդ էջին

«Իրավունքների հուշագիր» անվամբ: Այդ ուղղումներից առաջինը, քաղաքացիներին արտահայտվելու ազատություն է շնորհում: Այդ նույն արժեքներն էին կիսում ֆրանսիացի քաղաքականագետները, երբ 1783 թվականին Ֆրանսիայի հեղափոխությունից մի քանի ամիս անց մշակեցին փաստաթուղթ, որը սահմանեց օրենքի առջև բոլոր մարդկանց հավասարությունը:

Այս պատմության գագաթնակետն է Միավորված Ազգերի կազմակերպության կողմից 1948 թվականին ընդունած «Մարդու իրավունքների Միջազգային կոնվենցիան», որի պրեամբուլայում (ներածական մաս) խոսքի ազատությունը հիշատակված է, որպես մարդու ամենահիմնարար իրավունքներից մեկը: Դասակարգման համաձայն, այն համարվում է երրորդ սերնդի իրավունք:

Քսաներորդ դարասկզբին Վրաստանի պետությունը մեծ քայլ արեց արևմտյան իրավական մշակույթն ընդունելու հարցում: Մասնավորապես, 1917 թվականին հռչակված անկախությունից մինչև այն կորցնելը ստեղծեց հասարակության կանոնակարգը հավասարության և ազատության վրա հիմնելու նախադեպ:

Հենց այդ պատմահրավական ժառանգության վրա է հենվում Վրաստանի այսօրվա սահմանադրությունը, որը համաձայնեցված է ՄԱԿ-ի կողմից ընդունած փաստաթղթի հետ և ընդունում է միաջազգայնորեն ընդունած մարդու իրավունքները:

Վերադառնալ տեքստի առաջին էջին

Հրահանգ

Սխալի ուղղում (№19)

Առաջադրանքում տրված է մեկ թեմայի հետ կապված երկու տեքստ: Երկու տեքստն էլ պարունակում են փաստացի սխալներ: Ձեր խնդիրն է վերլուծել տեքստերը, հայտնաբերել սխալները, և գնահատել տեքստերը նախապես տրված սխեմայով սահմանված չափանիշներով: Գնահատումը գրառեք պատասխանների թերթիկի համապատասխան տեղում: Միավորների առավելագույն քանակը նշված է առաջադրանքի երկայնքով:

19. (6) Առաջադրանքում տրված է «ընտրություններ» թեմայով երկու տեքստ: Տեքստերը հնարավոր է պարունակեն սխալներ: Ծանոթացեք տեքստերին, վերլուծեք դրանց բովանդակությունը և գնահատեք դրանք առաջարկված չափանիշներով:

I տեքստ.

Ժողովրդավարական պետությունում յուրաքանչյուր քաղաքացուն ընձեռնված է երկրի համար կարևոր հարցերի լուծման գործում իր ավանդը ներդնելու հնարավորություն: Դրա համար ամենակարևոր ակտիվություններից մեկը ընտրություններին մասնակցությունն է: Ցանկալի ընտրական սուբյեկտի օգտին քվեարկելով քաղաքացիները իրականացնում են իրենց քաղաքական իրավունքը: Ընտրական համակարգերից հիմնականում երկուսն են առանձնացնում՝ Համամասնականն ու Մեծամասնականը:

Ժամանակակից ընտրությունների ժողովրդավարականությունը հիմնվում է այն հիմնական սկզբունքների պահպանության վրա, որոնցից զատ չէինք կարողանա խոսել ընտրություններում մարդկանց իսկական կամքի դրսևորման մասին: Կարևոր է պահպանել բաց լինելու սկզբունքը, այսինքն ընտրողի իրավունքը՝ անմիջապես քվեարկել կամ ընտրվել պաշտոնին, ինչպես նաև գաղտնի քվեարկության սկզբունքը, որը բացառում է վերահսկողության և ներգործության հնարավորությունը ընտրողի վրա և ապահովում ընտրողի կամքի ազատ արտահայտումը:

Քանի որ քաղաքացիների կամքը ժամանակի ընթացքում փոփոխվում է, այդ իսկ պատճառով կարևոր է սահմանել ընտրությունների ժամկետներ: Վրաստանի գործող օրենսդրությամբ սահմանված է, որ Վրաստանի Խորհրդարանն ուղղակի ընտրական իրավունքի հիման վրա ընտրվում է 4 տարի, իսկ ինքնակառավարումը՝ 5 տարի ժամկետով: Այսպիսով, ընտրությունների միջև դադարները, պետք է ժամանակ թողնեն, ինչպես գործող իշխանությանը՝ ծրագրերն իրականացնելու համար, այնպես էլ պետք է հետևեն ժողովրդի կամքի փոփոխություններին:

Անցնել II տեքստին *Անցնել գնահատման սխեմային*

II տեքստ.

Ժամանակակից ժողովրդավարական պետության կառուցման գործում կարևոր դերը շնորհվում է քաղաքացիների ակտիվությանը, նրանց ներգրավմանը երկրի համար կարևոր որոշումներ կայացնելու գործընթացում: Ընտրություններին մասնակցությունը յուրաքանչյուր մարդու իրավունքը, ինչպես նաև քաղաքացիական պարտքն է համարվում, քանի որ սեփական ձայնը արձանագրելով քաղաքացին իր կամքն է արտահայտում քաղաքական ասպարեզում: Համամասնական ընտրական համակարգի շրջանակներում մանդատները բաշխվում են կուսակցությունների կողմից ձեռքբերված ձայների համամասնությամբ:

Ընտրությունների անցկացումը որոշակի ժամանակամիջոցի կտրվածքով սահմանում է պետության սահմանադրությունը: Օրինակ՝ Վրաստանի նախագահի ընտրությունը, գործող սահմանադրության համաձայն, սահմանվում է 4 տարի, իսկ խորհրդարանի՝ 5 տարի ժամկետով: Ընտրական ժամկետները սահմանելիս կարևոր է նախատեսել, ինչպես բնակչության կամքի փոփոխությունն, այնպես էլ իշխանության համար բավարար ժամանակ հատկացնելը՝ ցանկալի քաղաքական ծրագրերն իրականացնելու համար:

Ընտրությունները ժողովրդավարական համարվելու համար կարևորագույն է պահպանել գլխավոր սկզբունքները, որոնց հիման վրա ապահովվում է ժողովրդի կամքի իրական և ազատ արտահայտումը: Ընտրությունների համընդհանուրության սկզբունքի հիման վրա, ընտրություններին մասնակցելու իրավունք ունի օրենքով սահմանված տարիքն առած յուրաքանչյուր քաղաքացի, որը բավարարում է օրենքի պահանջները: Բոլոր ընտրողների համար ընտրությունների արդյունքների վրա ներազդելու հավասար հնարավորությունն է հանդիսանում հավասարության սկզբունքը:

Վերադառնալ I տեքստին

Անցնել գնահատման սխեմային

Ուշադիր ծանոթացեք գնահատման սխեմային և երկու տեքստը գնահատեք տրված չափանիշների համաձայն: Գրեք համապատասխան միավոր գնահատման սխեմայի յուրաքանչյուր չափանիշի համար առանձին-առանձին:

	I. Չափանիշներ	II. Առավելագույն միավոր	III. Միավորներ շնորհելու սկզբունք
A.	**Ընտրական համակարգեր**	**3**	Յուրաքանչյուր ճիշտ անվանած և պարզաբանած ընտրական համակարգը՝ 1 միավոր
B.	**Ընտրություններ ի հիմնական սկզբունքներ**	**4**	Յուրաքանչյուր ճիշտ անվանած և պարզաբանած ընտրությունների հիմնական սկզբունքը՝ 1 միավոր
C.	**Ընտրական ժամկետներ**	**3**	Յուրաքանչյուր ճիշտ անվանած ընտրական ժամկետը՝ 1 միավոր

Ձեր կողմից շնորհված միավորները գրեք պատասխանների թերթիկում տրված աղյուսակում.

		A	B	C
19.1	I տեքստի գնահատում			
19.2	II տեքստի գնահատում			

Վերադառնալ I տեքստին *Վերադառնալ II տեքստին*

Հրահանգ

Առաջադրանք՝ բաց վերջավորությամբ (№20, 21, 22, 23, 24, 25.4-25.7)

Առաջադրանքում տրված է հարց, որին կցված չեն ենթադրական պատասխաններ: Ուշադրությամբ ընթերցեք առաջադրանքի պայմանը և հարցը: Պատասխանը պետք է լինի հարցին համարժեք և կոնկրետ: Պատասխանը գրառեք պատասխանների թերթիկի համապատասխան տեղում: Միավորների առավելագույն քանակը նշված է յուրաքանչյուր առաջադրանքի երկայնքով:

20. (5) Սխեմայում ոչ լիարժեք կերպով են պատկերված կոնֆլիկտային իրավիճակում վարքագծային տարբեր մոդելները և դրանց բնորոշ նշանները: Լրացրեք սխեմայի դատարկ վանդակները.

Վարքագծային մոդելներ	Վարքագծային մոդելների բացատրությունը	Ասերտիվության և գործընկերության աստիճանները	Ո՞ր դեպքում է նպատակահարմար այն կիրառել :
Փոխզիջում	20.1	Չափավոր ասերտիվություն Չափավոր գործընկերություն	Երբ ցանկանում էք կայացնել արագ որոշում / իշխանությունը կողմերի միջև հավասար է:
20.2	Հեռավորության վրա մնալ իրավիճակից, անտեսել հիմնախնդիրը:	Ցածր ասերտիվություն Ցածր գործընկերություն	Երբ հիմնախնդիրը ձեր համար փոքր և անկարևոր է և ունեք ժամանակ շահելու ցանկություն / ավելի նվազ իշխանություն ունեք:
Համակերպում	Զիջել սեփական շահերը, երկրորդ կողմի շահերը բավարարելու նպատակով:	20.3	Երբ ձեր համար կարևոր է պահպանել ներդաշնակություն, իսկ արդյունքն ավելի կարևոր է երկրորդ կողմի համար/գիտակցում եք, որ երկրորդ կողմ ունի ավելի մեծ իշխանություն:
Մրցակցություն	20.4	Բարձր ասերտիվություն Ցածր գործընկերություն	Երբ արդյունքը ձեր համար շատ կարևոր է և ճգնաժամային իրավիճակը պահանջում է կայացնել արագ որոշում/դուք ունեք ավելի մեծ իշխանություն :
Համագործակցություն	Միմյանց շահերի ճանաչում, փոխընդունելի որոշման ընդունում:	Բարձր ասերտիվություն Բարձր գործընկերություն	20.5 ..... / .....

21. (3) Քարտեզի վերլուծության հիման վրա պատասխանեք հարցերին.



21.1 Ո՞ր միջազգային կազմակերպության հիմնադիր երկրներն են ներկայացված քարտեզի վրա կապույտ գույնով:

21.2 Ո՞ր քաղաքում է գտնվում նշված կազմակերպության գլխավոր շտաբ-բնակարանը:

21.3 Անվանեք տրված կազմակերպության երկու կառուցվածքները:

22. (5) Առաջադրանքում տրված է դպրոցական նախագծի նպատակի, խնդիրների և իրականացման ուղիների ոչ լիարժեք տարբերակը: Դպրոցական նախագծին ավարտուն տեսք տալու համար առաջադրանքները կատարեք հետևյալ հաջորդականությամբ.

I. Որոշեք և գրառեք I խնդիրը, ելնելով աղյուսակում տրված իրականացման ուղիների թվարկացանկից *(Առաջադրանք 22.2)*

II. Գրեք իրականացման երեք տարբեր ուղի, որոնք նպաստում են աղյուսակում տրված II խնդրի կատարմանը *(Առաջադրանք 22.3)*

III. Որոշեք և գրառեք նախագծի նպատակը, որին հնարավոր է հասնել նախագծի երկու խնդրի և դրանց իրականացման ուղիներից ելնելով: *(Առաջադրանք 22.1)*

22.1	**Նախագծի նպատակը.** *(Գրեք նպատակը, որին հնարավոր է հասնել տրված խնդիրներից և իրականացման ուղիներից ելնելով)*
22.2	**Նախագծի I խնդիրը.** *(Սահմանեք և գրեք կոնկրետ խնդիր, ելնելով I խնդրի իրականացման ուղիներից)* **Նախագծի II խնդիրը.** **Բնապահպանական գործնական հմտությունների զարգացման խթանումը աշակերտների մեջ**
22.3	**<u>I խնդրի իրականացման ուղիները.</u>** 1. Կազմակերպել դասախոսություն Դարվինի հեղինակած էվոլյուցիայի տեսության մասին: 2. Ցուցադրել «Բարակա» կինոֆիլմը, որը պատկերում է մարդու և բնության փոխազդեցությունը: 3. Պատրաստել «Ես և բնությունը» վերնագրով դպրոցական պաստառներ: **<u>II խնդրի իրականացման ուղիները. (Գրեք տրված խնդրի իրականացման երեք տարբեր ուղի)</u>** 1. 2. 3.

23. (3) Ծանոթացեք փոշեկուլի գովազդային պատկերազարդմանը և պատասխանեք հարցերին՝

23.1 Քննադատորեն վերլուծեք տրված պատկերազարդումը ֆեմինիստական տեսանկյունից:

23.2 Քննարկեք նշյալ հիմնախնդրի արդիականությունը ժամանակակից վրաց սոցիո-մշակութային կտրվածքում:

23.3 Փաստարկված դատողություններ արեք նշված հիմնախնդիրը հաղթահարելու ուղիների մասին:

24. **(5) Ծանոթացեք տեքստին և կատարեք առաջադրանքը ստորև տրված ցուցումների համապատասխան.**

«Սոլոնի մյուս կանոններից չափազանց յուրօրինակ և արտասովոր է այն օրենքը, որը զրկում է արժանապատվությունից այն քաղաքացիներին, որոնք ներքաղաքական կոնֆլիկտի ժամանակ չեն հարել հակամարտող կողմերից ոչ մեկին: Ինչպես երևում է Սոլոնի, ցանկությունն էր, որպեսզի ոչ ոք սառնասրտորեն չվերաբերվեր ընդհանուր գործին և չբավարարվեր նրանով, որ նրան և իր գույքին վտանգ չեր սպառնա: Հայրենիքի ցավը բոլորը պետք է կիսեն հավասարապես»:

«Զուգահեռ կենսագրություններ» Պլուտարքոս

24.1 Ելնելով տեքստից որոշեք և անվանեք բանավեճի թեման: Դատողություններ արեք տվյալ տեքստի հետ Ձեր ընտրած բանավեճի թեմայի համապատասխանության և արդիականության մասին:

24.2 A. Անվանեք երկու փաստարկ բանավեճի ժամանակ առաջացած դիրքորոշումը պաշտպանելու համար:

B. Անվանեք երկու փաստարկ բանավեճի ժամանակ առաջացած դիրքորոշումը հերքելու համար:

(Յուրաքանչյուր փաստարկ պետք է կրի էականորեն անկախ միտք)

25. **(8) Վերլուծեք տրված աղբյուրները և պատասխանեք հարցերին.**

Աղբյուր N1

«Այո-ի և ոչ-ի բախումը, դրանց տարաձայնությունը և այդ ճանապարհով ճշմարտության հետազոտումը քննադատություն է: Քննադատության բնույթն այն է, որ ճշմարտությունը բացահայտելու և դրսևորելու նպատակով միաժամանակ նույն առարկայի հետազոտության մեջ գործի է դնում և «այո»-ն և «ոչ»-ը: Այն չի թույլատրում, որ դրանցից մեկը կամ մյուսը իր վրա վերցնի որոնումի և հետազոտման ամբողջ բեռը: Ինչպես սայլը չի անցնի ուղիղ, եթե մի կողմից քաշենք ճոպանը, այնպես էլ ճշմարտության որոնումներն ու հետազոտությունները չեն կարող լինել միակողմանի»:

«Իվերիա» թերթ, Իլյա Ճավճավաձե, 1837-1907

Անցնել աղբյուրներին՝ 2, 3, 4

Անցնել առաջադրանքներին՝ 25.1, 25.2, 25.3, 25.4-25.7

Աղբյուր N2

«...Շատ զարմանալի էր ուսման հանդեպ նրա ընդունակությունը, քանզի շատ արագ սովորեց «սաղմոսները» և եկեղեցական ուսմունքը: Վրաց լեզվում սովորեց այն ամենը, ինչ հնարավոր էր սովորել, սովորեց նաև բազմաթիվ լեզուների դպրություններ և անգիր արեց Սուրբ գրքերը: Բացի այդ, լավ սովորեց նաև այս աշխարհի փիլիսոփաների իմաստությունը և այն ինչ լավն էր, ընդունեց, իսկ վատն՝ անտեսեց»:

«Գրիգոլ Խանձթելիի կյանքը», Գիորգի Մերչուլե, X դար

Անցնել աղբյուրներին՝ 1, 3, 4

Անցնել առաջադրանքներին՝ 25.1, 25.2, 25.3, 25.4-25.7

Աղբյուր N3

«Ի՞նչ ճանապարհով է անձը հասնում նրան, որ նրա դատողությունները իսկապես վստահության են արժանանում: Դա նրանից է, որ նրա բանականությունը միշտ բաց է իր տեսակետերի և գործողությունների քննադատության համար: Նրանից է, որ նա միշտ ուշադիր լսում է այն ամենն, ինչ կարող է ասվել նրա դեմ, առավելագույնս օգտվում է նրանից, ինչում ճիշտ է հակառակորդը և պատրաստակամությամբ գիտակցում, հնարավորության դեպքում, բացատրում նաև մյուսներին, այն անճշտությունը, ինչը սխալ է համարվել իր կարծիքներում: Նրանից, որ գիտակցում է, որ մարդու համար առարկայի ամբողջական իմացությանը մի փոքր անգամ մոտենալու միակ միջոցն այն ամենի ուշադիր ունկնդրումն է, ինչ հնարավոր է ասեն իր մասին տարբեր հայեցակետեր ունեցող մարդիկ և ուսումնասիրեն նրան բոլոր տեսանկյուններից: Ոչ մի այլ ճանապարհով, այլ հենց այս միջոցով են հասել խելացի մարդիկ իմաստության: Այլ ճանապարհ չկա և չի էլ կարող լինել, ելնելով մարդկային ինտելեկտի բնույթից: Սեփական կարծիքները մյուսների կարծիքների հետ համեմատելով ուղղելու և լրացնելու սովորությունը ոչ միայն չի առաջացնում կասկածներ և տատանումներ կարծիքը գործնականում կիրառելու մեջ, այլև միակ հաստատուն հիմքն է նրա նկատմամբ վստահություն ցուցաբերելու համար»:

«Ազատության մասին», Ջոն Ստյուարտ Միլլ, 1806-1873

Անցնել աղբյուրներին՝ 1, 2, 4

Անցնել առաջադրանքներին՝ 25.1, 25.2, 25.3, 25.4-25.7

Աղբյուր N4

«Հավանաբար դուք չեք պատկերացնում, թե ինչ գրավիչ և համոզիչ է տոտալիտար մտածողության պարզությունը...Այն ներսից է կրծում մարդուն, ներսից է թափանցում ուղեղի մեջ: Այդ պարզությունն իսկապես գրավիչ է: Որտեղի՞ց է գալիս այդ հմայքը: Այնտեղից, որ նման մտածողությունը թույլ է տալիս, որպեսզի ինքդ քեզ խելացի համարես, հավատաս, որ ամեն ինչ հասկանում ես, առանց որևէ ջանք գործադրելու: Առհասարակ, մարդը ծույլ է: Այդ իսկ պատճառով նա ինքնաբերաբար միանում է այն ամենին, ինչի միջոցով առանց աշխատելու և ջանադրության կարող է «ինչ-որ բան» դառնալ: Այս գայթակղությունն ազդում էր մարդկանց վրա, ինչպես Խորհրդային Միությունում, այնպես էլ այլ երկրներում»:

«Ճնշված միտք», Մերաբ Մամարդաշվիլի, 1930-1990

Անցնել աղբյուրներին՝ 1, 2, 3

Անցնել առաջադրանքներին՝ 25.1, 25.2, 25.3, 25.4-25.7

25.1 Աղբյուր N2-ի համաձայն՝

ա. Գրիգոլ Խանձթելին մեծագույն դեր է ունեցել Տաո-Կլարջեթիի վանք-տաճարների կառուցման գործում:

բ. Գրիգոլ Խանձթելին շատ լավ էր ճանաչում կրոնական տեքստերը, ինչը խթանում էր նրան փիլիսոփայական տեքստերն ըմբռնելու հարցում:

գ. Փիլիսոփայական տեքստերը վնասում են կրոնական զգացմունքները, ինչից ելնելով էլ Գրիգոլ Խանձթելին խուսափում էր դրանք ընթերցելուց:

դ. Կրոնական տեքստերի հետ մեկտեղ, Գրիգոլ Խանձթելին ծանոթ էր նաև փիլիսոփայական տեքստերին, ինչը կատարյալ էր դարձնում նրա գիտելիքները

Վերադառնալ աղբյուրներին՝ 1, 2, 3, 4

Անցնել առաջադրանքներին՝ 25.2, 25.3, 25.4-25.7

25.2 Ո՞ր դատողություն է համապատասխանում Ջոն Ստյուարտ Միլլի կողմից աղբյուր N3-ում արտահայտած կարծիքին:

ա. Կարծիքը կարող ենք արժանահավատ համարել, եթե այն որոշակի քննություն անցնի այդ կարծիքը հակասական կարծիքների հետ հակադրելու ճանապարհով

բ. Հակասական կարծիքների առատությունը հաճախ քաոս է ստեղծում հասարակության շրջանում

գ. Չնայած նրան, որ տարբերվող կարծիքները շահավետ են զարգացման համար, գոյություն ունեն կարծիքներ, որոնց հանրորեն արտահայտումը ճիշտ չէ

դ. Ցանկացած կարծիք ունի այն հանրորեն արտահայտելու իրավունք, նույնիսկ այն դեպքում եթե այն վիրավորական է մյուսների համար:

Վերադառնալ աղբյուրներին՝ 1, 2, 3, 4

Անցնել առաջադրանքներին՝ 25.1, 25.3, 25.4-25.7

25.3 Աղբյուր N4-ի համաձայն.

ա. Տոտալիտար համակարգում բնակվող մարդն իր նպատակին կարող է հասնել միայն անհատական ջանքեր գործադրելու և փութաջանության շնորհիվ

բ. Վրացական մտավոր ավանդույթը տարբերվում է այլ երկրների ավանդույթներից, քանի որ այն համարձակորեն բաց է

գ. Գոյություն ունի իրավիճակ, երբ մարդը զգում է իր մտավոր առավելությունն առանց որևէ հարկադրանքի, ինչը միանգամայն բնական երևույթ է

դ. Տոտալիտար մտածողության պարզությունը հիմնվում է մարդու ծուլության և նրա ցանկության վրա՝ առանց որևէ ջանք գործադրելու իրեն համարել խելացի

Վերադառնալ աղբյուրներին՝ 1, 2, 3, 4

Անցնել առաջադրանքներին՝ 25.1, 25.2, 25.4-25.7

25.4 Սահմանեք քննադատական մտածողության հասկացությունը կիրառելով N1, N2 և N3 աղբյուրները:

25.5 Քննարկեք, թե ինչպես են փոխկապակցված Իլյա Ճավճավաձեի և Ջոն Ստյուարտ Միլի կարծիքներն ու Մերաբ Մամարդաշվիլիի նկարագրած մտածողության մոդելը:

25.6 Քնանարկեք, թե Մերաբ Մարարդաշվիլիի նկարագրած պատճառից բացի, ուրիշ ի՞նչ գործոններ են պայմանավորել Վրաստանում տոտալիտար մտածողության տարածումը խորհրդային բռնագրավման ժամանակաշրջանում:

25.7 Քննարկեք, թե ինչպե՞ս է արտացոլվել Մերաբ Մամարդաշվիլիի նկարագրած տոտալիտար մտածողության կարգը արդի վրաց սոցիոմշակութային կյանքի վրա: Քննարկելիս բերեք երկու օրինակ:

Վերադառնալ աղբյուրներին՝ 1, 2, 3, 4

Վերադառնալ առաջադրանքներին՝ 25.1; 25.2; 25.3